

Փիլիպպեցիս 3:7,8 (Philippians 3:7,8)

«Կին մը որ Աստուած կրնայ գործածել»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 06.30.02

Այս Առտու նկատի կ'առնենք հոգեւոր կիներ, որ Աստուած Իր նպատակին համար կը գործածէ: Վստահ եմ որ երբ հարց տամ, շատերս պիտի ուզէինք որ Տէրը մեզ գործածէր: Եթէ Տիրոջ զաւակն ես, կը խորհիմք թէ ունեցած ես ներքին երջանկութիւնը երբ Տէրը մեզ գործածած է: Պիտի կարդամ Փիլիպպեցիս 3:7,8, ուր Պօղոս առաքեալ կը ցուցունէ թէ մեր սիրտը ինչ դիրք պէտք է ունենայ, որ Տէրը կարենայ գործածել մեզ՝ Իր կամքին համաձայն:

Փիլիպպեցիս 3:7,8 *«Բայց ինչ որ ինծի շահ էր, զանհկա Քրիստոսի համար վնաս սեպեցի: Եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսին գերազանց գիտութեանը համար որուն համար ամէն բանէ զրկուեցայ եւ աղտեղութիւն կը սեպեմ, որպէսզի Քրիստոսը շահիմ:»*

Երկու կարեւոր յատկանիշ պէտք է ունենայ հոգեւոր կին մը կամ մարդ մը որպէսզի կարենայ գործածուիլ Աստուծմէ: Առաջին կարեւոր յատկանիշը՝ խոնարհ, կոտորուած սիրտ մը ունենալն է: Պօղոս առաքեալ կը յիշէ թէ ինչ որ շահ էր իրեն, Քրիստոսի համար վնաս սեպեց, նոյնիսկ աղտ:

Պօղոսի անցեալը գիտենք թէ զօրաւոր կրօնական մըն էր, եռանդուն իր հաւատքին մէջ հպարդ՝ իր անցեալով եւ նկարագրով: Բայց Պօղոս այս բոլորը կը նկատէ անկարեւոր նոյնիսկ պարապ, քանի որ Տէրը գտած է եւ հիմա իր սիրտը գերկ է հպարտութենէ, նաեւ կոտորած է:

Կ'սուի թէ բարի Հայ կինը բարի բարձր համբաւ ունի: Տունը մաքուր կը պահէ, համով մաշեր կեփէ, մանուկներուն լաւ հոգ կը տանի: Նաեւ Հայ տիկինը իր ամուսինին գմահանոյցին կը ծառայէ: Մենք ինքզինքնիս կը դատենք այն բաներով որ կարեւոր կը տեսնենք: Թոյլ կուտանք որ ուրիշներ մեզ դատեն ինչ որ իրենք կարեւոր կը նկատեն: Երբեմն կիներ զիրար կը դատեն անգութ կերպով, մտածելով որ այդ անձը արժանի է կամ ո՛չ: Երբ մենք մեր վրայ կը կեղրոնանանք այս տգեղ կացութիւնը մեզի կարեւոր կը թուի:

Երբ մեր սիրտը կոտրած է ու խոնարհ, անձնասիրութենէ կազատինք, մեր նիւթը այլեւս չ'ըլլար այս կարելոր բաները: Ցաւ կը զգանք երբ կը տեսնենք որ որչափ պաշտած ենք անկարելոր բաները:

Կին մը որ նուիրուած է Յիսուսի, եւ գիտէ թէ Ան ամէն բան է իրեն համար: Ահա օրինակ մը որ Աստուած կրնայ գործածել:

Երկրորդ յատկանիշը բարեպաշտ կնոջ սա է, կ'անձկայ Տիրոջ մօտենալ եւ ծառայել: *«Եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսին գերազանց գիտութեանը համար. որուն համար ամէն բանէ զրկուեցայ եւ աղտեղութիւն կը սեպեմ, որպէս զի Քրիստոսը շահիմ»:* Էն կարելոր բանը՝ շահիլ Քրիստոսը, մօտէն նանչնալ զԱյն:

Մեր bazaarին շատ տոմսեր կը ծախուին եւ վերջը շահողներ կ'ըլլան շատ մը առարկաներու: Ամէն անձ կուզէ լաւագոյն իրը շահիլ եւ մեծ եռանդով կը սպասեն: Արդիօք անձ մը կա՞յ կեանքիդ մէջ որուն լման նուիրուած ես: Կարելի՞ է նոյն եռանդով Քրիստոսի նայիլ:

Պօղոս առաքեալ 2րդ Կորնթացիս 5:14ին մէջ կըսէ *«Քրիստոսի սէրը զիս կը ստիպէ»*, զիս իրեն կը կապէ, զիս կը կառավարէ: Ամուսնացած գոյգ մը իրենց հարաբերութիւնը պինդ կը պահէ եւ թոյլ չի տար որ ուրիշը միջամտէ: Նոյնպէս մենք եթէ կուզենք որ Աստուած մեզ գործածէ սրտանց իրեն նուիրուելու ենք:

Մեր հաւատքը մեզի կը ստիպէ որ սերտենք Աստուծոյ խօսքը, աղօթենք, պաշտենք Տէրը, հաւատացեալներու հետ հաղորդակցինք եւ վկայենք: Որոշում տալու ենք թէ ինչ՞ դիտենք, ինչ կարդանք, մեր սրտերը ու մտքերը ինչո՞վ կը լեցնենք: Արդեօք չանք կընե՞նք որ Տէրը աւելի մօտէն նանչնանք:

Տէրը կանչեց Նոյ որ տապանը շինէ: Դիւրին չէր եւ զինք կը ծաղրէին: Բայց Նոյ հաւատքով հնազանդ եղաւ Աստուծոյ: Աստուած Նոյը գործածեց մարդկութիւնը պահելու համար:

Տէրը կանչեց Արրահամը: Ղրկեց զինքն օտար երկիր: Դիւրին չէր:
Արրահամ չէր գիտեր թէ Տէրը ո՞ւր կ'առաջնորդէր զինքն: Բայց
Արրահամ հաւատաց ու վստահեցաւ Աստուծոյ եւ յօժարութեամբ
հետեւեցաւ: Աստուած Արրահամի միջոցով փրկութիւն բերաւ
մարդոց:

Բոլորս կուգեմք որ Աստուած մեզ գործածէ: Վստահ եմ որ Տէրը
կուզէ մեզ գործածել: Այդ կինը որ խոնարհ ու կոտրած սիրտ կը
կրէ եւ կ'անձկայ Տիրոջ մօտենալ եւ ծառայել, Տէրը զինքն պիտի
գործածէ:

Աղօթք

Սիրելի երկնաւոր Հայր, խորարհեցուր մեզ, օգնէ մեզի որ մեզի
առաջին տեղը տանք մեր կեանքերուն մէջ: Մեր սրտին մէջ դիր
փափաք մը որ մեզ փնտռենք: Մեզ Քու փառքիդ համար գործածէ:
Յիսուսի անունով՝ Ամէն: